ՌԻՏԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
ԵՊՀ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՏԴ 81՝282

ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԳԵՂԱՄԱՎԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. բարբառների բազմահատկանիշ դասակարգում, հնչյունական հատկանիշ, ձևաբանական հատկանիշ, խուլ բաղաձայն, տեղաշարժ, քմայնացում, մերձեցում, խոսվածքի ոչնչացում, տարիքային խումբ:

Ключевые слова и выражения: многозначительное классификация диалектов, звуковое особенность, морфологическая особенность, глухое согласное, передвижение, палатализация, сближение, разрушение диалека, возрастная група.

Key words and expressions: significant classification of dialects, phonetic feature, morphological feature, deaf consonant, movement, palatalization, approach, destruction of dialect, age group.

Գրական լեզվի և բարբառների փոխհարաբերությունը պատմական և շարունակական գործընթաց է. այն միշտ եղել է մեր լեզվաբանների, գրականագետների, գրողների ու մանկավարժների ուշադրության կենտրոնում և բազում քննարկումների տեղիք է տվել: Հարցը քննարկվել է ինչպես գրական լեզվի, այնպես էլ գեղարվեստական գրականության լեզվի առումով և հիմնականում նկատի է առնվել այն հանգամանքը, թե որքանով են բարբառները օգնում լեզվի զարգացմանն ու կատարելագործմանը, հարստացնում գեղարվեստական խոսքը, և արդյոք դրանց չարաշահումը չի հանգեցնում գրական լեզվի մաքրության ու կատարելության խաթարմանը:

Երկար քննարկումների ու բանավեճերի առիթ է դարձել նաև բարբառների ոչնչացման հարցը, որի վերաբերյալ հնչեցվել են իրարամերժ ու հակասական կարծիքներ: Նշված հարցադրումները պարզելու նպատակով դիտարկել ենք ժամանակակից խոսվածքներից մեկը:

Ուսումնասիրելով Սևանի շրջանի Գեղամավան գյուղի խոսվածքում մոտ կես դարում կատարված տեղաշարժերը՝ մենք փորձել ենք հասկանալ, թե բարբառների ոչնչացումը որքանով է իրատեսական ներկա շրջանում:

Նախ ասենք, որ Գեղամավանի խոսվածքը ըստ էության **Ում** ճյուղի բարբառախմբի մեջ է մտնում, բայց ձևաբանական մի շարք

հատկանիշներով (վաղակատարի **ր**-ով, հարակատարի **ուկ** (**ուգ**)-ով կազմություն և այլն) մոտենում է **Կը** ճյուղի բարբառներին:[1]

Հիմք ընդունելով Գ. Ջահուկյանի՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը՝ մենք առանձնացրել ենք Գեղամավանի խոսվածքի **հնչյունական** և **ձևաբանական 25** հատկանիշ(14 հնչյունական և 11 ձևաբանական) և տարիքային 4 խմբերի հարցումների հիման վրա արձանագրել այն տեղաշարժերը, որոնք կատարվել են խոսվածքում:[2]

Մեր ուշադրության կենտրոնում եղել են չորս սերնդի մարդիկ, որոնց ներկայացրել ենք հետևյալ տարիքային խմբերով՝

1-ին խումբ՝60-80 տարեկան,

2-րդ խումբ՝ 40-60 տարեկան,

3-րդ խումբ՝ 20-40 տարեկան,

4-րդ խումբ՝10-20 տարեկան:

Վերը նշված Յուրաքանչյուր խմբից հարցման են ենթարկվել 10 հոգի, այսինքն՝ ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 40 մարդ:

Ընդ որում, հարցման են ենթարկվել համապատասխանաբար նույն տարիքային խմբի և՛ բարձրագույն կրթություն ունեցողները, և՛ չունեցողները, այսինքն՝ տարբեր մասնագիտությունների ու զբաղմունքների տեր մարդիկ: Հարցման ենթարկվածներին պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի՝ բարձրագույն կրթություն ունեցողների և չունեցողների: Ասենք նաև, որ կրթություն ունեցողների մեջ հիմնականում նկատի ենք ունեցել մանկավարժներին ու ուսանողներին:

Այժմ ներկայացնում ենք խոսվածքին բնորոշ հնչյունական և ձևաբանական հատկանիշները և դրանցից շեղումները՝ ըստ մեր հարցումների արդյունքների:

1. Խոսվածքում առկա է բաղաձայնների քառաստիճան համակարգ (բ՛, բ, պ, փ), որը պահպանվում է տարիքային և սոցիալական նշված բոլոր խմբերում:

2. Բառամիջում և բառավերջում, ինչպես նաև **ր**-ից հետո ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները համատարած վերածվում են շնչեղ խուլերի, ինչպես՝ բարձ-բ՛առց, խաբել-խափիել:

3. Բառամիջում և բառավերջում, ինչպես նաև **ր**-ից հետո խուլ պայթականներն ու կիսաշփականները վերածվում են ձայնեղ

[1] Ռ. Սաղաթելյան, Գեղամավանի խոսվածքը նրա դիրքը «ում» և «կը» ճյուղերի բարբառների միջև, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, թիվ 3, էջ154:

[2] Տես Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:

պայթականների, ինչպես՝ կատու- կադու, մածուն- մաձուն, արծաթ-առձատ: Այս հատկանիշը դպրոցահասակ երեխաների ու ուսանողների խոսքում մասամբ է գործածվում:

4. Բառամիջում և բառավերջում շնչեղ խուլերը ապաշնչեղանում են՝ վերածվելով խուլերի, ինչպես՝ շունչ-շունճ, քաղաք-քաղակ: Սակայն հատկապես նոր սերնդի մանկավարժների խոսքում շնչեղների ապաշնչեղացումը մասամբ է գործում:

5. Բաղաձայններից առաջ կիսաշփականները հիմնականում (բացի մի քանի մանկավարժների խոսքից) վերածվում են շփականների, ինչպես՝ անեծք-անեսկ, մեջք-մեշկ:

6. Բառասկզբում ձայնավորներից առաջ առկա է **յ**(**յh**) հավելական շունչը, ինչպես՝ աղբյուր-յհախպուր, անցնել-յհըսնել, յհուստ:

7. Բառասկզբի **h-խ** փոփոխությունը ընդհանրացված չէ, բայց մի քանի բառերում (**հազ-խազ, հող-խուզ**) պահպանվում է 30-ից բարձր տարեկանների խոսքում:

8. Խոսվածքում առկա է նաև հայերենի համար ոչ սովորական **կ՛** հնչյունը, որը գործածում են 1-ին և 2-րդ տարիքային խմբերում(40-80տ.): Այն հնչում է հատկապես օտար բառերում, ինչպես՝ **դամաթ - կ՛սմիէտ, դարիբ - կ՛արիբ, դուտիկ - կ՛ուտի, դազ - կ՛ազ** և այլն: Այս դեպքում հնչյունական երևույթի մահացումը, կարծում ենք, պայմանավորված է նշված օտարաբանությունների վերացումով:

9. Գրաբարի **այ** երկհնչյունը համատարած հնչյունափոխվում է **է**-ի, ինչպես՝ հայր-հէր, այս-էս:

10. **Է** (**Ե**) ձայնավորի դիմաց բառամիջում **իե** երկբարբառացում, որը բնորոշ է տարիքային նշված բոլոր խմբերին՝ բացի բարձրագույն կրթություն ունեցողներից և ուսանողներից, ինչպես՝ վերջ-վիէռչ, խելք-խիէլկ:

11. **Օ** (Ո) ձայնավորի դիմաց **ուо** երկբարբառացում՝ բացի վերը նշվածներից և 20 տարեկանից ցածր խմբերից, ինչպես՝ փող-փուօղ, փոր-փուօր:

12. Մի շարք միավանկ բառերում **ե**-ից առաջ տեղի ունենում **յ**-ի հավելում(ե-ի երկբարբառացում), ինչպես՝ես-յիէս, երգ-յիէրք:

13. Բառասկզբում **ռ**-ից առաջ շրթնային տարրի հավելում (**ռ-վէ, ռուо**), ինչպես՝ **որ- վէր, որբ - վէռփ, որտեղ - վուօրդեղ** և այլն: Ընդ որում, այս փոփոխությունը 20-40 տարիքային սահմանում գործում է մասամբ, իսկ 20-ից ցած գրեթե գործածական չէ:

14. Մի շարք բառերում **ա** ձայնավորի քմայնացում, որը նույնպես նոր սերնդի մոտ գործում է մասնակիորեն, ինչպես՝ դանակ-դ՛ա÷նա÷գ, աչք-յհա÷շկ:

15. Հոգնակերտ մի շարք մասնիկների (**եր, երք, արենք, բանք**) առկայություն, ինչպես՝ տղա-տրղերք(կ), այստեղ-ըստիէղարենք(կ)-ըստեղրանք:

16. **Ն** (**եր**)-ով հոգնակիի և **ի** հոլովման առկայություն, ինչպես՝ տուն-տընների:

17. Բացառական հոլովի **ց**-ով կազմություն՝ **ց-ծ** հնչյունափոխությամբ, ինչպես՝ սար-սարիծ:

18. Ներգոյական հոլովի առկայություն, ինչպես՝ գիրք-գ՛ըրկում:

19. **Իկ** (**գ**)-ով դերանվանական ձևեր, ինչպես՝ **ինձ- ընձիգ, այս- էսիգ** և այլն: Այս ձևերը վերջին շրջանում իրենց տեղը զիջում են **ընձի, էսի** ձևերին:

20. Ցուցական դերանունների թեք հոլովներում **տ, դ, ստրա** մասնիկների հավելում, որոնցից առաջ արտասանվում է գաղտնավանկի ը հնչյունը, ինչպես՝ **սրա- ըստրա, նրա-ընդրա, սրանք-ըստրանք, ըստոնք** և այլն: Այս երևույթը մանկավարժների և ուսանողների մի մասի խոսքում չի նկատվում:

21. Վաղակատար դերբայի **ր**-ով կազմություն, ինչպես՝ գ՛րեր եմ, պադմեր էր: Սա, կարելի է ասել, խոսվածքում համատարած երևույթ է՝ շատ քիչ բացառությամբ;

22. 30-ից բարձր տարեկանների խոսքում առկա է նաև **ուկ**(**ուգ**)-ով հարակատար դերբայի կազմություն, ինչպես՝ գ՛րուգ, կերուգ, քնուգ:

23.Օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի **է**-ի դիմաց **ա**-ով ձև, որը համատարած է խոսվածքում, ինչպես՝ գ՛ըրըմ ա, կարտըմ ա և այլն:

24. Օժանդակ բայի անցյալ անկատարի գրական **էի, էիր, էր, էինք, էիք, էին** ձևերի դիմաց **է**-ի սղումով ձևեր, ինչպես՝ **գ՛ըրըմ իր, գ՛ըրըմ ինք** և այլն:

25. **Ե** խոնարհման բայերի անցյալ կատարյալի արմատական հիմքով կազմություն, ինչպես՝ **գ՛ըրի, գ՛ըրիր, գ՛ըրեծ, գ՛ըրինկ, գ՛ըրիկ, գ՛ըրին**:

Ստորև ներկայացնում ենք մի աղյուսակ, որտեղ պարզ երևում են Գեղամավանի խոսվածքում վերջին տարիներին կատարված տեղաշարժերը՝ նշված հատկանիշների հիման վրա: Աղյուսակում +- նշանով տրվում են այն դեպքերը, որոնք մեր դիտարկած տարիքային խմբերում գործում են զուգահեռաբար՝ կախված հարցվածների կրթությունից, մասնագիտությունից, զբաղմունքից (կրթություն ունեցողներ/-/ և կրթություն չունեցողներ/+/):

Աղյուսակ 1

Հնչյունական հատկանիշներ	**Տարիքային սահմանը**			
Զևաբանական հատկանիշներ	**60-80**	**40-60**	**20-40**	**10-20**
1. բաղ. քառ. համ (բ՝ բ պ փ)	+	+	+	+
2. ձայնեղ. վեր. շնչ. խուլերի	+	+	+	+
3. խուլերի վեր. ձայնեղ.-ի	+	+	+	+-
4. շնչ. խուլ. վեր. խուլերի	+	+	+	+
5. կիսաշփ. վեր. շփականների	+	+	+	+
6. բառասկզբում յ՝(յհ)-ի առկ.	+	+	+	+
7. բառասկզբում հ-ի վեր. խ-ի	+	+	+-	-
8. կոկ.կ հնչ.-ի առկ	+	+	+-	-
9. այ-ի հնչ.-ն է-ի	+	+	+	+
10. ե-ի դիմ. իէ-ի առկ.	+	+	+-	+-
11. ո-ի դիմ. ուօ երկբարբառ	+	+	+-	-
12. ե-ից առ. յ-ի հավելում	+	+	+	+
13. բառասկ. ո-ի դիմ. վէ, ուօ	+	+	+-	-
14. ա ձայն. քմայնացում	+	+	+	+-
15. հոգնակերտ եր, եր+ք, արենք, ռունք մասն. առկ.	+	+	+	+

16. ն(եր)-ով հոգն և ի հոլ . առկ.	+	+	+	+
17. բաց-ի ց-ով կազմություն	+	+	+	+
18. ներգ. հոլովի առկայություն	+	+	+	+
19. իկ(գ)-ով դերանվ. ձևեր	+	+	+-	+-
20. տ,դ, սրա մասն. հավելում ցուց. դերանուններում	+	+	+-	+
21. վաղ. դերբայի ր-ով կազմ.	+	+	+	+
22. հարակ. դերբ-ի ուկ-ով կազմ.	+	+	+-	-
23. 3-րդ դեմքի է-ի դիմ. ա-ով ձև.	+	+	+	+
24. օժ. բայի անց. անկ.-ի է-ի սղումով ձևեր (ի, իր,իք)	+	+	+	+
25.ե խոն պարզ բայերի արմ. հիմ	+	+	+	+

Ինչպես նկատելի է աղյուսակից, Գեղամավանի խոսվածքին բնորոշ հնչյունական 14 հատկանիշներից վերացման միտում ունի ընդամենը 4-ը, 3-ը մեծ մասամբ գործածվում է տարիքային բոլոր խմբերում՝ բացառությամբ որոշ բարձրագույն կրթություն ունեցողների և դպրոցահասակ երեխաների խոսքի, իսկ 7-ը համատարած պահպանվում է: Ձևաբանական 11 հատկանիշներից մեկը վերացել է, մեկը վերանալու միտում ունի, իսկ 9-ը համատարած գործածվում է:

Ինչ խոսք, խոսվածքում գրական լեզվի ազդեցությամբ որոշ հատկանիշներ վերանում են:

Գեղամավանի խոսվածքի գրականացման գործընթացը ավելի հստակ արտացոլելու նպատակով մենք որոշակի դիտարկում ենք կատարել նաև

նրա բառապաշարում: Պայմանականորեն առանձնացրել ենք խոսվածքի երկու մեծ բառաշերտ՝

1. Նեղ բարբառային բառեր, որոնց մեջ նկատի ենք ունեցել.

ա) զուտ գավառական բառերը,

բ) գրական բառերի բարբառային հնչյունափոխված ձևերը,

գ) բարբառային փոխառությունները:

2. Ընդհանուր բարբառային բառեր, որոնք ավելի լայն տարածում ու գործածություն ունեն: Ընդ որում, այս խմբում ներառել ենք ինչպես արևելյան լեզուներից, այնպես էլ ռուսերենից կատարված այն փոխառությունները, որոնք խոսվածքում լայն գործածություն ունեն:[3]

Քննությունը դարձյալ կատարել ենք նույն տարիքային խմբերի ու զբաղմունքների տեր մարդկանց հետ: Մեր հարցման արդյունքներից պարզ դարձավ, որ առաջին շերտի բառերը կրթություն ունեցողների, ուսանողների, ինչպես նաև 20-ից ցածր տարիքային խմբերում գրեթե չեն գործածվում, իսկ երկրորդ շերտի բառերը լայնորեն գործածվում են գրեթե բոլոր տարիքային խմբերում՝ անկախ մասնագիտությունից և կրթությունից: Սակայն պետք է ասենք, որ հատկապես մանկավարժների խոսքում որոշ ռուսերեն բառերի փոխարեն գործածվում են դրանց հայերեն համարժեքները:

Ստորև դարձյալ ներկայացնում ենք երկու աղյուսակ, որտեղ պարզ երևում են բառապաշարային նշված շերտերի գործածությունն ու շարժերը:[4]

Աղյուսակներում հիմնականում ընդգրկել ենք այն բառերը, որոնք նշված խմբերում ավելի հաճախակի են գործածվում: Իսկ +- նշանը այստեղ ևս նշանակում է, որ տվյալ բառը սոցիալական առաջին խումբը(կրթություն ունեցողներ/-/) մեծ մասամբ չի գործածում, իսկ երկրորդ խումբը(կրթություն չունեցողներ/+/) համատարած գործածում է:

Աղյուսակ 2

Նեղ բարբառային բառեր	Տարիքային սահմանը			
ա.զուտ գավառ.բ., բ.բարբառային	**60-80**	**40-60**	**20-40**	**10-20**

[3] Օտար բառերը աղյուսակում տրված են այնպես, ինչպես արտասանվում են խոսվածքում:

[4] Բառերի բացատրությունը տալիս ենք առանց որևէ բառարանի՝ ըստ խոսվածքում արտահայտած իմաստների:

հնչյուն. ձևեր, գ.բարբառային փոխ.				
1. մթոմ-իբր	+	+	+-	-
2. հա:լբա:տ երևի, թերևս	+	+	+-	-
3. բա:լկի- երևի, թերևս	+	+	+ -	-
4. չե:շկի- երանի	+	+	-	-
5.ջե:դե: `(գյադա)-տղա	+	+	+-	-
6.մետկա(մի թիքա)- մի քիչ	+	+	-	-
7.մշու-մի քիչ	+	+	+-	-
8.հընաճօր - ոնց որ, կարծես	+	+	+-	-
9.ժխշե:լ – շարժել, թափահարել	+	+	+-	-
10.ճոժգդալ- շորորալ	+	+	+-	-
11.թա:պուկ- հարված, քացի	+	+	+-	-
12. սաբոն-օճառ	+	+	+-	-
13. ժե:խ- աղբ, կեղտ	+	+	+-	-
14. քունջ- անկյուն	+	+	+-	-
15. թա:պ- թա:զա:- լրիվ նոր	+	+	+-	+-
16. կ՛ուտի-սնդուկ	+	+	+-	-
17. դուզ-ճիշտ	+	+	+-	+-
18. անջախ-հազիվ	+	+	-	-
19.չա:նգա:լ-պատառաքաղ	+	+	+-	+-
20.թեշտ-թաս	+	+	+	+
21. թեշի-իլիկ	+	+	+-	+-
22.մըխտե:ռ- վատ, կեղտոտ	+	+	+-	+-
23.կ՛ասաբ-անասուն մորթող, նաև՝մսավաճառ	+	+	+-	-
24.կ՛ա:յիշ-գոտի	+	+	+-	-
25.թիկե:- պատառ	+	+	+-	-

Աղյուսակ 3

Ընդհանուր բարբառային բառեր	Տարիքային սահմանը			
ռուսերեն բառեր, արևել. փոխառ.	**60-80**	**40-60**	**20-40**	**10-20**
1. պզդիզ(պստիկ)-փոքր	+	+	+	+
2. դար-գերեզման	+	+	+	+
3. էտալ-գնալ	+	+	+ -	+
4. հարսնիկ-հարսանիք	+	+	+-	+-
5.ճամբա//ճամփա-ճանապարհ	+	+	+	+
6.ճիժ- երեխա	+	+	+-	+-
7.էրեխա-երեխա	+	+	+	+
8. ախպեր-եղբայր	+	+	+	+
9. ըստուծ- այստեղից	+	+	+-	+
10.քեֆ-խնջույք	+	+	+	+
11.դուշ-աղավնի	+	+	+-	+-
12. զա:հլա-տրամադրություն	+	+	+	+-
13. յարա-վերք	+	+	+-	+-
14. թա:զա:- նոր	+	+	+-	+-
15. փեշ-քղանցք	+	+	+	+
16. հա:վես-տրամադրություն	+	+	+	+
17. ինադու-դիտավորյալ	+	+	+	+

18.տելեվիզր-հեռուստացույց	+	+	+-	+
19.կոանտ-ծորակ	+	+	+-	+
20.վեդրո-դույլ	+	+	+-	+
21. չայնիկ-թեյնիկ	+	+	+-	+
22.խալադելնիկ-սառնարան	+	+	+-	+-
23. մառազիլկա-սառցարան	+	+	+	+
24.պադալոկ-առաստաղ	+	+	+-	+
25.պոլ-հատակ	+	+	+-	+

Աղյուսակներից պարզ երևում է, որ կրթություն չունեցող 3 տարիքային խմբերում էլ և՛ առաջին և՛ երկրորդ շերտի բառերը լայնորեն գործածվում են, իսկ կրթություն ունեցողների և նոր սերնդի խոսքում դրանք գրեթե վերացել են: Ինչ վերաբերում է 2-րդ շերտի բառերին, պատկերը բոլորովին այլ է. գրեթե բոլորը՝ անկախ տարիքից և կրթությունից, մեծ մասամբ դրանք գործածում են:

Բառերի ընտրությունը, իհարկե, պայմանական է, սակայն կարող է արտացոլել խոսվածքի բառօգտագործման պատկերը:

Ինչպես պարզ երևում է վերը բերված երեք աղյուսակներից, Գեղամավանի խոսվածքում մոտ կես դարում այնքան էլ մեծ ու մասշտաբային փոփոխություններ չեն կատարվել: Իհարկե, ժամանակակից կյանքում և աշխարհում կատարվող զարգացումները, գիտության և տեխնիկայի առաջընթացը, հասարակական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները և բազմապիսի այլ ներքին ու արտաքին գործոններ չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել գյուղական բնակչության վրա և, անշուշտ, խոսվածքի մերձեցումը գրական լեզվին հատկապես վերջին սերնդի խոսքում նկատելի է, բայց այն, որ ներկա փուլում տեղի կունենա խոսվածքի ոչնչացում կամ ձուլում գրական լեզվին, կարծում ենք, այնքան էլ իրատեսական չէ: Մանավանդ եթե հաշվի առնենք երկու կարևոր հանգամանք.

1.Գյուղի բնակչության մեծամասնությունը բարձրագույն կրթություն չի ստացել, զբաղվում է հողագործությամբ ու անասնապահությամբ և

համեմատաբար փակ կենսակերպի պատճառով խոսվածքին բնորոշ բոլոր երևույթները պահպանում է իր խոսքում:

2.Կրթություն ստացածներն ու ուսանողները, անգամ մանկավարժները աշխատանքից դուրս՝ առօրյայում, իրենց խոսքում օգտագործում են բարբառային տարրեր:

Մի հետաքրքիր դիտարկում էլ. Խոսվածքի գրականացման միտումը բնականաբար ավելի շատ նկատելի է վերջին սերնդի խոսքում, սակայն միևնույն դասարանից հարցման ենթարկված 10 երեխաներից ոչ բոլորն էին նույն պատասխանը տալիս. մի մասը բարբառային գրեթե բոլոր տարրերը պահպանում էր իր խոսքում: Նույնը կարող ենք ասել նաև հարցման ենթարկված ուսանողների վերաբերյալ:

Իհարկե, մեկ խոսվածքի վերլուծության հիման վրա դժվար է միանշանակ կարծիք կազմել, սակայն դեռևս կես դար առաջ բարբառների արագ ոչնչացման ջատագովները(Ստ. Կուրտիկյան, Վ. Խեչումյան, Բ. Հովսեփյան, Էդ. Աղայան և այլք), կարծում ենք, տուրք էին տալիս իրեց ժամանակների հիմնական գաղափարախոսություններից մեկին՝ գյուղ-քաղաք տարբերության վերացմանը, որը դեռևս մնաց անիրագործելի:[5] Ժամանակը ցույց տվեց, որ բարբառները վերանում են այն դեպքում, երբ վերանում է այն կրող բնակչությունը, ինչպես դա պատահեց արևմտահայության մի շարք բարբառների հետ:

Գրականության ցանկ

1. Սովետական գրականություն, Եր., 1962թ., թիվ 9, 10:
2. Սովետական գրականություն, Եր., 1963թ., թիվ 6, 7, 11:
3. Պատմաբանասիրական հանդես, Եր. 1964թ., թիվ 3:

Ռ. Սաղաթելյան

Տեղաշարժերը Գեղամավանի խոսվածքում

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրել ենք Գեղամավան գյուղի բնակչության խոսքը: Հարցման են ենթարկվել տարիքային ու սոցիալական տարբեր խմբերի մարդիկ: Հարցումների արդյունքում ի հայտ եկած հնչյունական,

[5] Տես 1960-ական թվականներին «Գրական թերթ»-ում և «Սովետական գրականություն» ամսագրում ծավալված գիտական մեծ բանավեճը գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության, ինչպես նաև բարբառների ոչնչացման հարցերի շուրջ:

ձևաբանական և բառապաշարային մի շարք տեղաշարժերի հիման վրա փորձել ենք ցույց տալ, թե ինչ չափով է գրականացվել գյուղաբնակների լեզուն, և որքան իրատեսական է մոտ ապագայում խոսվածքի վերացումը:

Р. Сагателян

Изменения в диалекте Гегамавана

Резюме

В статье мы изучили диалект населения села Гегамаван. Были опрошены группы людей разных возрастных категорий и разного социального положения. На основе фонетических, морфологических и лексических произношений, выявленных в результате опросов, мы попытались показать, в какой степени развивался язык сельского населения, и какая вероятность того, что в ближайшем будущем произойдет полное искоренение данного диалекта.

R. Saghatelyan

Linguistic Transpositions in Geghamavan Dialect

Summary

The aim of this article is to study the speech peculiarities of Geghama village population. The participants of the given inquiry were people of different ages and social classes. Having based on phonetic, morphological and vocabulary transpositions we have shown not only the level of literalization of the particular dialect, but also the danger of its further extinction.